ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

# ՈՐՈՇՈՒՄ N 100

15 հոկտեմբերի 2021 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (ՔԱՂԱՔ՝ ՄԱՐԱԼԻԿ) ՀՈՂԵՐԻՑ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 08-003-0138-0009) ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 56-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ մասերի, 67-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով՝

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է</u>

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության քաղաք Մարալիկ Կոլտնտեսականների փողոց 173 հասցեում գտնվող հողամասում արտադրական օբյեկտներ կառուցելու նպատակով (կադաստրային ծածկագիր 08-003-0138-0009) 4 հեկտար հողատարածքը օտարել աճուրդային եղանակով:

2. Հողատարածքի մեկնարկային գին հաստատել հողի կադաստրային արժեքի 100 %-ի չափով՝ 31 680 000 (երեսունմեկ միլիոն վեց հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ՝ ... 8 | Դեմ՝ ... 0 | Ձեռնպահ՝ ... 0 |
|---|---|---|---|
| Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ | | | |
| Ա. ԱՐՄԵՆՅԱՆ | | | |
| Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ | | | |
| Մ.ՂԱԶԱՐՅԱՆ | | | |
| Գ.ՂԶՐՈՅԱՆ | | | |
| Բ.ՄԵԼԻՔՅԱՆ | | | |
| Ա.ՆԱԶԱՐՅԱՆ | | | |
| Ա. ՆԻԿՈՅԱՆ | | | |
| Ա.ՈՒՌՈՒՄՅԱՆ | | | |
| Վ.ՍԱՀԱԿՅԱՆ | | | |
| Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | | | |
| Զ.ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| Ա.ՎԱՐՈՍՅԱՆ | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի հոկտեմբերի 15
Քաղաք Մարալիկ